



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» *Մայիս* 201 թ.

N 57-ժ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 27-ի եզրակացությունը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Տրամադրել լիցենզիա Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեությունների տեսակներով զբաղվելու համար լիցենզավորվող 13 իրավաբանական անձանց թվով 13 լիցենզիա և 18 ներդիր (համաձայն հավելված 1-ի):
2. Համարել կասեցված տարեկան պետական տուրքը չվճարած լիցենզիավորված 59 իրավաբանական անձանց թվով 87 ներդիրների գործողությունը մինչև տարեկան պետական տուրքը և ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տարեկան պետական տուրքի 0.075 տոկոսի չափով հաշվարկված տույժը վճարելը (համաձայն հավելված 2-ի):

3. Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի «Լիցենզավորման կենտրոն» գործակալության պետ՝ Բաղդասար Սնգրյանին

1) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ լիցենզավորված անձանց, լիցենզիան հանձնել համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

2) Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ն. Սարգսյան

















